ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

Մերձավոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 13, քրդագիտություն. Երևան, 1985, 285 էջ։

Միջնադարյան հայկական աղբյուրներում կան բազմաթիվ հավաստի տեղեկություններ քուրդ ժողովրդի, նրա մշակույթի, սովորույթների, կենցաղի և այլնի մասին։ Քուրդ ժողովրդի նկատմամբ հետաքրքրության շրջանակները ավելի են ընդլայնվել հետագա դարերում, մասնավորապես XIX դարում։ Այս շրջանում է, որ հայ երախտավորներ Խ. Աբովյանը, Ս. Եղիազարովը, Ղ. Ինճիճյանը, Ե. Լալայանը, Լեոն, Հ. Մանանդյանը, Հ. Ղաղարյանը (Լաղո), Գ. Սրվանձտյանցը, Հ. Օրբելին և ուրիշները քրդագիտության այս կամ այն հարցը դարձրին հատուկ ուսումնասիրության առարկա։ Եվ պատահական չէ, որ հայ քրդագիտությունը, նախահեղափոխական շրջանում ունենալով այդպիսի հարուստ ավանդույթներ, իր նոր վերելքը ապրեց սովետական շրջանում։ Քրդերեն լեզվով սկսեց հրատարակվել բազմաբնույթ գրականություն, հիմնադրվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի և Մինիստրների խորհրդի օրգան «Ռյա Թազա» թերթը, հայկական ռադիոն կազմակերպեց քրդերեն հաղորդումներ, ՀՍՍՀ գրողների միությանը կից ստեղծվեց քուրդ գրողների մասնաճյուղը, իսկ 1958 թ. ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի կազմում բացվեց քրդագիտության պրոբլեմային խումբը, որը 1971 թ., սեկտորի ինստիտուտ դառնալուց հետո, դարձավ նրա բաժիններից մեկը։ Քրդագիտության բաժինը համալրվել և համալրվում է քուրդ և հայ մտավորականներով։ Բաժնի գիտական հետաքրքրությունների շրջանակները ընդգրկում են քուրդ ժողովրդի պատմության, լեզվաբանության, բանահյուսության, գրականության, ազգագրության տարբեր խնդիրներ։ Քրդագիտության բաժնի աշխատակիցների ջանքերով հրատարակվել են մի քանի տասնյակի հասնող գրքեր։ Վերջերս լույս տեսավ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 13. Քրդագիտություն» ժողովածուն, որը հրատարակության է ներկայացրել ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտը։ Քննարկվող ժողովածուն, որը մինչև այժմ հրատարակված քրդագիտական երկրորդ ժողովածուն է, պարունակում է քրդագիտության տարբեր պրոբլեմներին նվիրված հետաքրքիր հոդվածներ։ Այն բաղկացած է պատմություն, բանասիրություն, ազգագրություն, հրապարակում բաժիններից։ Ուշագրավ է, որ բացի քրդագիտության բաժնի աշխատակիցների հոդվածներից, ժողովածուում զետեղված են նաև ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի և նրա լենինգրադյան մասնաճյուղի, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի, Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատողների հոդվածներն ու հաղորդումները։

Քրդական ազատագրական շարժումը վերելք է ապրում և նշանակալից դեր է խաղում Մերձավոր ու Միջին Արևելքի արդի իրադարձությունների մեջ։ Այդ շարժման տարբեր ասպեկտներ լուսաբանվել են մասնագետների կողմից։ Սակայն ցարդ նրա մի շարք պրոբլեմներ կարոտ են հանգամանալի մարքսիստական արժեքավորման։ Նման խնդիրների թվին է պատկանում քրդական ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության մասին կարևոր հարցը, որին նվիրված է պատմական գիտությունների դոկտոր Շ. Խ. Մհոյանի ընդհանրացնող հոդվածը։ Քրդական հիմնական ազգային-դեմոկրատական կուսակցությունների ծրագրային փաստաթղթերի հանգամանալից վերլուծման հիման վրա հոդվածում ցույց են տրված քրդական ազգային-ազատագրական շարժման բնորոշ գծերը, շարժիչ ուժերի տեղաբաշխման մեջ տեղի ունեցած փոփոխությունները։ Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում քրդական ազատագրական շարժման վրա միջազգային գործոնների ազդեցության և դրանց հետ առնչված այդ պայքարի մեթոդների և առաջադրած նպատակների կնճռոտ խնդրի լուսաբանումը։

ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի քրդագիտության սեկտորի գիտաշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Օ. Ի. Ժիգալինայի հոդվածը նվիրված է ազգային-դեմոկրատական շարժմանը Իրանական Քրդստանում 1960—1970-ական թթ.։ Այնտեղ քննվում են այդ շարժման սակավ ուսումնասիրված հարցերը։ Հեղինակը կոնկրետ ու համոզիչ փաստերով

ցույց է տալիս Իրանում 1960—1970-ական թթ. տեղի ունեցած սոցիալ-տնտեսական տեղաշարժերը և քրդական ազգային-դեմոկրատական կուսակցությունների ու կազմակերպությունների պայքարը քուրդ ժողովրդի ազգային և սոցիալական պահանջների բավարարման համար։ Եվ թեև պայքարը հաջողությամբ չպսակվեց, սակայն, ինչպես ճիշտ եզրակացնում է հեղինակը, այն նպաստեց քուրդ ակտիվիստների քաղաքական գիտակցության բարձրացմանը և շահական վարչակարգի դեմ պայքարի անհրաժեշտության հույսը ներշնչեց։

ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Մ. Ա. Հասրաթյանը «1925 թ. քրդական ապստամբությունը» հոդվածում հանգամանորեն լուսաբանում է խնդրո առարկա հարցը։ Ապստամբության ամբողջ ընթացքը, նրա շարժիչ ուժերը, վերելքն ու հետագա անհաջողությունները լուսաբանված են բազմաբնույթ նյութի հիման վրա։ Հիմնավորված փաստերով հեղինակը քննարկում է ապստամբության պարտության պատճառները և ընդգծում, որ չնայած իր կրած պարտությանը, այդ ապստամբությունը լուրջ հետք թողեց և կարևոր նշանակություն ունեցավ քուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացման գործում։

Ռուս-քրդական կապերի մի քանի հարցեր քննարկվում են պատմական գիտությունների թեկնածու Խ. Մ. Ջատոևի «Ռուս-քրդական կապերի պատմությունից» հոդվածում։ Հեղինակը, շրջանառության մեջ դնելով արխիվային հարուստ փաստական նյութ, լուսաբանում է ռուս և քուրդ ժողովուրդների կապերի պատմությունը, որի սկիզբը դրվել էր դեռ XIX դարի սկզբին, երբ Անդրկովկասը, այսինքն Վրաստանը, Հյուսիսային Ադրբեջանը և Արևելյան Հայաստանը միացան Ռուսաստանին։ Հեղինակը ցույց է տալիս, որ ռուս-քրդական կապերն ունեին առավելապես ռազմական համագործակցության բնույթ Իրանի և սուլթանական Թուրքիայի դեմ մղվող պայքարում և ընդգծում, որ Ռուսաստանի սոցիալ-քաղաքական բարձր մակարդակը Թուրքիայի և Իրանի համեմատ, նպաստավոր պայմաններ ստեղծեց ռուսական կայսրության սահմաններում ապրող քրդերի զարգացման համար։

Սղերդի եզդի իշխան Շեյխ-Միրզայի կյանքն ու գործունեությունը հիմք է դարձել պատմական գիտությունների թեկնածու Ջ. Ջ. Ջալիլի «Էջեր հայ-քրդական պատմամշակութային առնչություններից» հոդվածի համար։ Հոդվածը հետաքրքրությամբ է ընթերցվում և հանդիսանում է մանրազնին պրպտումների և մեծաքանակ աղբյուրների օգտագործման արդյունք։ Այստեղ գրավոր նյութերի կողքին կան հետաքրքիր բանահյուսական քաղվածքներ՝ վերցված հայերեն, քրդերեն և ասորերեն բանահյուսությունից։

Պատմական գիտությունների թեկնածու Կ. Ա. Ջալանիի հոդվածը նվիրված է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամական կապերի ուսումնասիրմանը։ Հոդվածում հեղինակը քննարկում է հայ-քրդական մշակութային կապերը, հայ մտավորականության ու հայ մամուլի դերը քուրդ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերի լուսաբանման մեջ։ Հեղինակը առանձնակի ուշադրություն է դարձնում Խ. Աբովյանի, Ռաֆֆու, Գր. Արծրունու և մյուսների այն արտահայտություններին, որոնք վերաբերում են քրդերենին, քուրդ ժողովրդի մշակույթին, օտարերկրյա լծի դեմ մղվող ընդհանուր պայքարում քուրդ և հայ ժողովուրդների ջանքերի միավորման հարցերին։

XIX դարի առաջին կեսի քուրդ բանաստեղծների և պատմաբանների մեջ իր ուրույն տեղն ունի քուրդ առաջին կին բանաստեղծ ու պատմաբան Մահ Շարաֆ Խանում Քուրդիստանին՝ Մասթուրե բանաստեղծական ծածկանվամբ, որի մասին գիտական աշխարհը ցարդ անտեղյակ էր։ Արդեղանում (իրանական Քրդստան) ապրած այս շնորհաշատ բանաստեղծուհու և պատմաբանի կյանքի ու ստեղծագործության հարցերն է շոշափել լենինգրադցի ճանաչված քրդագետ, պատմական գիտությունների թեկնածու Ե. Ի. Վասիլևան իր «XIX դարի առաջին կեսի քուրդ բանաստեղծուհի և պատմաբան Մահ Շարաֆ Խանում Քուրդիստանիի կյանքի և ստեղծագործության մասին» հետաքրքրությամբ ընթերցվող հոդվածում։ Հոդվածը, անշուշտ, շահած կլիներ, եթե այնտեղ ավելի մեծ տեղ հատկացված լիներ Մասթուրեի բանաստեղծություններից կատարված քաղվածքներին։

Ուշագրավ է պատմական գիտությունների թեկնածու Ա. Հ. Խաչատրյանի Հաքքարի իշխանության կազմավորման և Հաքքարի իշխանների տոհմաբանության ու ժամանակագրության խնդիրներին նվիրված հոդվածը։ Հեղինակը հայկական աղբյուրների համակողմանի քննության և արաբական պատմագրական և վիմագիր աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության հիմամբ վեր է հանել XIV դարում Հարավային Հայաստանի Ռշտունիք, Տոսպ, Ճահուկ, Աղբակ, Անձևացիք և այլ գավառներում հաստատված Հաքքարի ցեղից (կամ Շամոյան, Շամրոյան, Շամոանից) քուրդ իշխանների երևան գալու հանգամանքները, իշխանության կազմավորման պարագաները և պատմական պայմանները։ Վիմագիր արձանագրությունների տվյալների հիման վրա հեղինակը կատարել է մի շարք ժամանակագրական ճշտումներ։ Ըստ հեղինակի կարծիքի, այդ իշխանությունը կազմավորվել է ոչ թե XIV դարի 80-ական թթ., ինչպես մինչև այժմ ընդուն-

ված է, այլ ավելի վաղ, մոտավորապես XIV դարի 30-ական թթ., այսինքն իշխանության պատմությունը մոտ 50 տարով հետ է գնում։ Այդ մասին է վկայում Ոստանի (Ռշտունիք) «Հալիմա Խաթունի» դամբարանի մուտքի պարակալի արաբերեն շինարարական արձանագրությունը (1335 թ), ըստ որի 1335 թ. մալիք Իզզ ադ-դինը արդեն հաստատվել է Ոստանում։ Թովմա Մեծոփեցու վկայությամբ մալիք Իզզ ադ-դինը սերում էր Վասպուրականի Արծրունյաց հայ թագավորական տնից՝ «Եզդին յազգէն Սենեքերիմեանց»։ Հեղինակը Խլաթի արաբերեն տապանագրերի հիման վրա ճշտում է քուրդ իշխան Իզզ ադ-դինի կնոջ էթնիկական պատկանելությունը և մահվան թվականը։ Ըստ հեղինակի, Փաշա Խաթունը եղել է ոչ թե թուրքմենուհի, ինչպես ավանդում են հայկական վկայաբանությունները, այլ քրդական Ռոժակ (Ռոշակի, Ռոշկի) ցեղից և մահացել է 1396 թ. ապրիլ ամսին։ Հավանաբար, Ոստանի բարձրարվեստ դամբարանը կառուցվել է Իզզ ադ-դին իշխանի մոր՝ Հալիմա Խաթունի պատվին։ Հոդվածի վերջում բերվում է հեղինակի կողմից կազմված և լրացված Հաքքարի իշխանների նոր տոհմածառը և ժամանակագրությունը։

Շատ կարևոր է, որ Ա. Հ. Խաչատրյանը շարունակի իր պրպտումները քրդական իշխանությունների քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությունը լուսաբանելու ասպարեզում և այդ գործի մեջ ներգրավի նորանոր հայտնի և անհայտ արաբական վիմագիր արձանագրությունների տվյալներ։

Արաբական գրավոր աղբյուրների համադրությունը հայկական և այլ աղբյուրների նյութերի հետ անշուշտ արժեքավոր և կարևոր նպաստ է բերում նաև հայագիտությանը։

Քրդերի միջնադարյան պատմությունը և դրա հետ սերտորեն կապված պրոբլեմները մինչև օրս անհրաժեշտ չափով լեն ուսումնասիրվել քրդագետների կողմից։ Ջնայած վերջին տարիներին անհամեմատ մեծացել է արևելագետների հետաքրքրությունը քուրդ ժողովրդի պատմական անցյալի նկատմամբ, այնուամենայնիվ հրապարակի վրա եղած գործերը դեռևս հեռու են բավարար լինելուց. դա առաջին հերթին պետք է բացատրել նրանով, որ դեռևս գիտական շրջանառության մեջ չեն մտել քրդերի մասին հարևան ժողովուրդների՝ հայերի, արաբների, ասորիների, պարսիկների և այլոց միջնադարյան սկզբնաղբյուրների նյութերը։ Այդ ուղղությամբ կատարված լուրջ փորձերից է պատմական գիտությունների թեկնածու Ա. Պ. Փոլադյանի՝ «Իսլամի տարածումը քրդերի մեջ VII—X դարերում (ըստ, արաբական միջնադարյան աղբյուրների)» վերնագրով հոդվածը։ Մանրազնին ուսումնասիրելով IX—XV դդ. արաբալեզու պատմիչների, աշխարհագիրների և այլոց նյութերը, հեղինակը առաջին անգամ լուսաբանում է քրդագիտության կնճռոտ պրոբլեմներից մեկը՝ իսլամի կրոնական գաղափարախոսության ներթափանցումը քրդական իրականության մեջ, դրա տարածման առաջին փուլը։ Սակավաթիվ, բայց միաժամանակ հույժ հետաքրքիր նյութերով Ա. Փոլադյանը քննության է առնում քրդերի միջնադարյան՝ արաբական տիրապետության ժամանակաշրջանի պատմության մի խումբ հետաքրքիր հարցեր։ Հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ քրդերի մեջ իսլամի գաղափարները տարածվեցին սկսած VII դարի 30-ական թթ., արաբական արշավանքներից հետո։ Սկզբնական շրջանում նոր կրոնը տարածվում էր դանդաղ, հիմնականում բռնի կերպով և հաճախ ծանր հարկատեսակներից խուսափելու հետևանքով։ Սակայն իսլամի տարածման բուն պրոցեսը, ինչպես գտնում է Ա. Փոլադյանը, սկսվեց մոտավորապես IX դարում, իսկ X—XI դդ. այն կրեց մասսայական բնույթ, երբ քրդական ֆեոդալական վերնախավը, ելնելով իր քաղաքական ու տնտեսական շահերից, ինչպես նաև ազդեցության ոլորտը ընդլայնելու նպատակով անցավ իսլամի ծառայության։ Հետաքրքրական են հոդվածում բերված փաստերը նախաիսլամական շրջանում քրդերի մեջ գոյություն ունեցող հավատալիքների մասին։ Հիշյալ ժամանակաշրջանում քրդական իրականության մեջ գոյություն ունեին ոչ միայն հեթանոսությունը, այլև զրադաշտականությունը, քրիստոնեությունը և այլ հավատալիքներ, որոնք հետզհետե իրենց տեղը զիջեցին իսլամին։

Ժողովածուի բանահյուսության բաժինը սկսվում է բազմավաստակ քուրդ գիտնական, բանասիրական գիտությունների դոկտոր Հ. Ջընդիի՝ «Դրմ-դրմ» էպոսի հայերեն տարբերակները» հոդվածով։ Այնտեղ հանգամանալից քննության են առնվում արևմտահայ բանաստեղծներից գրի առնված քրդական «Դրմ-դրմ» էպոսի հայերեն տարբերակները, բացահայտվում են այդ տարբերակների առանձնահատկությունները, տրվում են նրանց տեղայնացումն ու գաղափարագեղարվեստական գծերը։ Քրդական «Դրմ-դրմ» էպոսի հայերեն տարբերակների առկայությունը քուրդ-հայկական պատմամշակութային փոխադարձ կապերի ուշագրավ երևույթներից է։

ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատակից, արվեստագիտության թեկնածու Ն. Հ. Ջաուարին հանդես է եկել «Քրդական երաժշտական բանագիտության մի քանի խնդիրներ» հոդվածով։ Ինչպես հայտնի է, քրդական ժողովրդական երաժշտության գրառման ու մշակման հարցերով զբաղվել են նաև հայ երաժշտագետներ Քր. Կարա-Մուրզան, Կոմիտասը, Սպ. Մե-

ությանը, Ս. Զաքարյանը, Ս. Դասպարյանը, որը նույնպես հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության մասին է խոսում։ Հեղինակը քննական հակիրճ վերլուծության է ենթարկում քրդական երաժշտության բնագավառում կատարված աշխատանքները և ընթերցողների ուշադրությունը հրավիրում է քրդական երաժշտական բանագիտության կարևոր խնդիրների վրա, մասնավորապես՝ երգարվեստի գեղչական ճյուղի առավել արժեքավոր և քիչ գրառված նմուշների ու դրանց հետ առնչվող պատմությունների, լեգենդների, միաժամանակ աշուղական քաղաքային և հոգևոր ճյուղի երգերի, ինչպես նաև գործիքային երաժշտության նմուշների հայտնաբերում ու գրառում, այդ ձայնագրությունների գիտական ուսումնասիրման ընթացքի ակտիվացում, գիտական բնույթի ժողովածուների ստեղծում և այլն։

Լենինգրադցի ճանաչված գիտնական, բանասիրական գիտությունների դոկտոր, հանգուցյալ Ղ. Ֆ. Քուրդոևի «Հատուկ անունները քրդերենում» հոդվածում քննության են առնվում իրանական, արաբական, թուրքական, հայկական և ռուսական ծագում ունեցող անձնանունների կիրառման ձևերը, նրանց կրած փոփոխությունները քրդերենում։

Բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Հ. Խամոյանի ծավալուն հոդվածը ներկայացնում է արդի քրդերենի դարձվածաբանական կազմի քերականական ու շարահյուսական հայեցակետերով կատարված ուսումնասիրության արդյունքները։ Հեղինակին հաջողվել է բացահայտել դարձվածաբանական կազմի ներքին շերտավորման սկզբունքները, որոնք հեղինակին հիմք են տվել կառուցել քրդերենի դարձվածքների իմաստաքերականական դասակարգումն ու նրանում տեղադրել համապատասխան խոսքի մասերի հետ հարաբերակցվող դարձվածքների քերականական դասերը իրենց քերականական կարգերի ու շարահյուսական առանձնահատկությունների դրսևորումների նկարագրությամբ։

Լրիվ դերանունների կողքին էնկլիտիկ դերանունների լայն կիրառումը սորանիի, այսինքն քրդերենի հարավային բարբառի քերականական կառուցվածքի յուրահատուկ առանձնահատկություններից է։ Այս պրոբլեմին է նվիրված լենինգրադցի գիտնական, բանասիրական գիտությունների թեկնածու Զ. Ա. Յուսուպովայի «Էնկլիտիկ դերանունները նախադասության կառուցվածքում (քրդերենի հիման վրա)» հետաքրքիր հոդվածը, որտեղ հեղինակը համակողմանի քննարկման է ենթարկում սորանիի նախադասության կառուցվածքի այն հիմնական տիպերը, որոնցում այս կամ այն ձևով առկա են էնկլիտիկ դերանունները։

«Ազգագրություն» բաժնում պատմական գիտությունների թեկնածու Մ. Խ. Դարվեշյանը «Նախամուսնական ընտրության պայմանները ու ձևերը Հայաստանի քրդերի մեջ» հոդվածում դաշտային, ազգագրական և գրավոր սկզբնաղբյուրների հիման վրա փորձ է արել տալ տոնախմբությունների, ավանդական հավաքույթների, զանազան ծիսական արարողությունների ընթացքում երիտասարդ քուրդ տղաների և աղջիկների միմյանց ի մոտո ճանաչելու, ընտրություն կատարելու ձևերը։ Գիտական հետաքրքրություն է ներկայացնում Բնդարուկի ինստիտուտը՝ որպես քրդական հնագույն ծիսական ավանդույթներից մեկի վերապրուկ։

Բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Ս. Ասատրյանը «Հանդերձյալ կյանքի եղբոր և քրոջ» մասին եզիդիների կրոնական հավատալիքներում» հոդվածում հատուկ ուսումնասիրության առարկա է դարձրել ցարդ քիչ հայտնի եզդիական «Հանդերձյալ կյանքի եղբոր և քրոջ» կրոնական ինստիտուտը։ Հոդվածում քննարկվող հարցերը հետաքրքիր են նրանով, որ դրանք ավելի են ընդլայնում մեր պատկերացումը եզիդիզմի հավատալիքների համակարգի մասին։

«Հրապարակում» բաժնում ներկայացված է Ն՝աշտոցի անվան Մատենադարանի դիտաշխատակից, պատմական գիտությունների դոկտոր Հ. Դ. Փափազյանի «Երևանի Մուհամադ-խան Ղաջարի՝ Միրզա աղա Սիպկիին և Ահմադ-աղա Զիլանիին շնորհած հրամանագրերը (XVIII դ.)» հաղորդումը։ Հեղինակը պարսկերենից հայերեն թարգմանել և հրատարակել է (Մաշտոցի անվան Մատենադարանի Արևելյան ֆոնդից) Երևանի Մուհամադ-խան Ղաջարի հիշրայի 1199 և 1200 թթ. տված երկու հրամանագրերը՝ խանության Արարատյան շրջանում բնակվող քրդական Սիպկի և Զիլանի ցեղերի առաջնորդներին աղայություն շնորհելու մասին։ Նման հրամանագրերի թարգմանության կարևորությունը կայանում է նրանում, որ դա հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմելու հիշյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական իրավիճակի մասին։

Ամփոփելով վերը նշվածը, հարկ ենք համարում ընդգծել, որ ժողովածուն զերծ չէ նաև թերություններից. նախ պետք է նշել, որ ոչ բոլոր հոդվածներն են գրված պատշաճ գիտական մակարդակով, որոշ հոդվածներ առավելապես փաստագրական բնույթ ունեն, տեղ-տեղ կան լեզվական անհարթություններ։

Այս թերությունները, սակայն, չեն նսեմացնում քննարկվող ժողովածուի արժեքը, որն ուշագրավ երևույթ է սովետական արևելագիտական գրականության մեջ։

Ս. Վ. ԳԵՂԱՄՅԱՆ